



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

«15» հոկտեմբեր 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ թիվ 246-1-Շ

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մեացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 31274/2022/ԿՈՒՎ 4/Ա/ արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքի (Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Քեռու փ., 52/13տ., ՀՇՀ 3403550540) չկատարված հարկային պարտավորությունը 20.10.2022թ-ի դրությամբ կազմում է 12.259.266 դրամ, այդ թվում հարկ՝ 10.228.490 դրամ, տույժ՝ 2.030.776 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով, 10.03.2023թ-ին հարուցվել է վարչական վարույթ, որի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացրել վարույթի նյութերին ծանոթանալու համար և չի ներկայացրել որևէ բացատրություն:

Համաձայն ՀՀ ներքին գործերի նախարարության Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում և ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում առկա տվյալների, Արտաշ Անդրանիկի Զիրաքին /ՀՇՀ 3403550540/ 11.03.2022թ-ին 099-ի կողմից տրվել է նոր անձնագիր՝ AU 0643952 Արտաշ Զիրաքի Անդրանիկի «Արտաշ» անունը փոխվել է «Արտաշ» անվան/։ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության կողմից Արտաշ Անդրանիկի Զիրաքին /ՀՇՀ 3403550540, անձն. AU0643952, ծնված 24.03.1955թ. ք. Երևան, Արաբկիր, Քեռու փողոց/ 14.03.2023թ-ին շնորհվել է հարկ վճարողի 72981401 հաշվառման համարը /ՀՎՀՀ/:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից, թիվ 31274/2022/ ԿՈՒՎ 4/Ա/ արձանագրության հիման վրա, 10.04.2023թ-ին կայացվել է թիվ 246-Ա որոշումը՝ Արտաշ Անդրանիկի Զիրաքից 20.10.2022թ-ի դրությամբ չկատարված 12.259.266 դրամ պարտավորության գումարը գանձելու մասին:

18.07.2024թ-ին ՀՏՈՎ վարչության կողմից, ի լրումն 20.10.2022թ-ի թիվ 31274/2022/ԿՈՒՎ 4/Ա արձանագրության, տրամադրվել է թիվ 10053/2024/Ե/Ա արձանագրությունը /կցվում է/, համաձայն որի ՀՀ Կադաստրի կոմիտեից ստացված տեղեկությունների համաձայն ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքի /հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Քեռու փ., 52/13 տ., ՀՇՀ 3403550540/ կողմից 2019-2021թթ-ին կատարվել են օտարման գործարքներ և կատարված հաշվարկի արդյունքում 20.10.2022թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունը հիշյալ գործարքների արդյունքում կազմել է 10.032.402 դրամ, որից հարկ՝ 8.660.000 դրամ, տույժ՝ 1.372.402 դրամ:

Գործի քննարկման արդյունքում պարզվել է նաև, որ ՀՀ ՊԵԿ կամերալ ուսումնասիրությունների և վերլուծության թիվ 4 բաժնի կողմից 10.02.2020թ-ին կազմված պարտավորությունների հաշվարկման թիվ 344/2020/ԿՈՒՎ 4/Ն տեղեկանքի հիման վրա, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 20.04.2020թ-ին կայացվել է թիվ 1595-Ա որոշումը Արտաշ Անդրանիկի Զիրաքից 10.02.2020թ-ի դրությամբ չկատարված 1.914.342 դրամ պարտավորությանները, որից հարկ՝ 1.568.490 դրամ, տույժ՝ 345.852 դրամ գանձելու մասին: Հիշյալ պարտավորությունները հաշվարկվել են 19.10.2018թ-ին իրականացված ք. Երևան, Արաբկիր, Քեռու փ. թիվ 52/6 հասցեում գտնվող անշարժ գույքի օտարման գործարքի արդյունքում: Պարզվել է նաև, որ 14.08.2020թ-ին Արտաշ Անդրանիկի Զիրաքին /ՀՇՀ 3403550540/ շնորհվել է հարկ վճարողի 20233103 հաշվառման համարը /ՀՎՀՀ/:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Արտաշ Անդրանիկի Զիրաքի /ՀՇՀ 3403550540/ կողմից 19.10.2018թ-ին իրականացված օտարման գործարքի արդյունքում թիվ 344/2020/ԿՈՒՎ 4/Ն տեղեկանքի հիման վրա հաշվարկված պարտավորությունները արդեն իսկ գանձվել են ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 20.04.2020թ-ի թիվ 1595-Ա որոշմամբ, հաշվի առնելով այն, որ Արտաշ Անդրանիկի Զիրաքին /ՀՇՀ 3403550540/ 11.03.2022թ-ին 099-ի կողմից տրվել է նոր անձնագիր՝ AU 0643952 Արտաշ Զիրաքի Անդրանիկի /«Արտաշ» անուն՝ փոխվել է «Արտաշ» անվան/, ինչպես նաև



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

այն, Արդաշ Անդրանիկի Զիրաքին 14.08.2020թ-ին արդեն իսկ շնորհված է եղել հարկ վճարողի 20233103 հաշվառման համարը /ՀՀՀՀ/, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 10.04.2023թ-ի թիվ 246-Ա «Ձկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին» որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման «Պարզեցի» մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմված թիվ 31274/2022/ԿՈԻՎ4/Ա արձանագրության՝ ֆիզիկական անձ Արդաշ Անդրանիկի Զիրաքի (Հասցե՝ ք. Երևան Արաբկիր, Քեռու փ., 52/13տ., ՀԾՀ 3403550540, ՀՀՀՀ 20233103) չկատարված հարկային պարտավորությունը 20.10.2022թ-ի դրությամբ կազմել է 10.032.402 դրամ, որից հարկ՝ 8.660.000 դրամ, տույժ՝ 1.372.402 դրամ:»:

2. Որոշման «Պարզեցի» մասի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձ Արդաշ Անդրանիկի Զիրաքին /1/2 բաժնային սեփականությամբ/, Վարուժան Թահերմիզյանի Քեշիշյանի / 1/4 բաժնային սեփականությամբ/ և Ռոբերթ Յեզնիկի Ահանգարիի /1/4 բաժնային սեփականությամբ/ հետ միասին փաստացի հանդիսացել են քաղաք Երևան, Արաբկիր, Քեռու փողոց, 52/1 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատողներ, վերջիններիս կողմից նշված հասցեի բնակարանները հասցեավորված է որպես բնակելի տներ, սակայն ըստ հարկային մարմնում առկա փաստաթղթերի, 2019-2021թթ-ին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների օտարման գործարքներ:

3. Որոշման «Պարզեցի» մասի 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ստորև ներկայացվում է ֆիզիկական անձ Արդաշ Անդրանիկի Զիրաքիի կողմից 2019-2021թթ-ի ընթացքում իրականացված օտարման գործարքները.

Անշարժ գույքի գտնվելու վայրը	Գրանցման ամսաթիվ	Պայմանագրի գումար	բաժնեմասը	Պայմանագրի գումարը ֆիզիկական անձի բաժնային սեփականությունը համապատասխան
Ք.Երևան Արաբկիր Քեռու փողոց 52/10	17.01.2019	13.500.000	1/2	6.750.000
Ք.Երևան Արաբկիր Քեռու փողոց 52/2	24.01.2020	8.900.000	1/2	4.450.000
Ք.Երևան Արաբկիր Քեռու փողոց 52/7	06.10.2020	14.000.000	1/2	7.000.000
Ք.Երևան Արաբկիր Քեռու փողոց 52/3	16.11.2020	7.450.000	1/2	3.725.000
Ք.Երևան Արաբկիր Քեռու փողոց 52/8	22.01.2021	8.300.000	1/2	4.150.000
Ք.Երևան Արաբկիր Քեռու փողոց 52/12	22.01.2021	7.100.000	1/2	3.550.000
Ք.Երևան Արաբկիր Քեռու փողոց 52/14	25.03.2021	11.500.000	1/2	5.750.000
Ք.Երևան Արաբկիր Քեռու փողոց 52/5 բնակելի տուն	08.04.2021	8.300.000	1/2	4.150.000
Ք.Երևան Արաբկիր Քեռու փողոց 52/1	08.04.2021	7.550.000	1/2	3.775.000

3. Որոշման «Պարզեցի» մասի 8-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համաձայն ՀՀ ներքին գործերի նախարարության Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում և ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում առկա տվյալների, Արդաշ Անդրանիկի Զիրաքին /ՀԾՀ 3403550540/ 11.03.2022թ-ին 099-ի կողմից տրվել է նոր անձնագիր՝ AU 0643952 Արտաշ Զիրաքի Անդրանիկի «Արդաշ» անունը փոխվել է «Արտաշ» անվան: Ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքիի /մինչև 11.03.2022թ-ը՝ Արդաշ



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Անդրանիկի Զիրաքի/ կողմից իրականացված վերը նշված գործարքների մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել 2019-2021թթ-ի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկները»:

4. Որոշման «Պարզեցի» մասի 9-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արդյունքում՝ սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը եկամտային հարկի գծով կազմել է 10.032.402 դրամ, որից հարկ՝ 8.660.000 դրամ, տույժ՝ 1.372.402 դրամ, որից 2019թ-ի համար հարկ՝ 1.350.000 դրամ, տույժ՝ 394.200 դրամ, 2020թ-ի համար հարկ՝ 3.035.000 դրամ, տույժ՝ 665.272 դրամ, 2021թ-ի համար հարկ՝ 4.275.000 դրամ, տույժ՝ 312.930 դրամ: Պարտավորությունը հաշվարկվել է ֆիզիկական անձի կողմից իրականացված անշարժ գույքի օտարման գործարքների և տվյալ գործարքներից բխող 2019-2021թթ-ի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկները օրենքով սահմանված ժամկետում հարկային մարմին չներկայացնելու, ինչպես նաև հարկի գումարները չվճարելու հետևանքով օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերի արդյունքում»:

2. Որոշման «Որոշեցի» մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքից /մինչև 11.03.2022թ-ը՝ Արդաշ Անդրանիկի Զիրաքի, ՀՎՀՀ 20233103/ գանձել 10.032.402 դրամ պարտավորության գումար ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

20.10.2022թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ / Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2020թ	1.350.000	394.200	-	1.744.200	պետական բյուջե	900008000490
2	Եկամտային հարկ	20.04.2021թ	3.035.000	665.272	-	3.700.272	պետական բյուջե	900008000490
3	Եկամտային հարկ	20.04.2022թ	4.275.000	312.930	-	4.587.930	պետական բյուջե	900008000490

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ. անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի
առաջատար մասնագետ Արեգա Պարսեղյան, հեռ. 010-30-91-91 /91-69/:



**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ**

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am